

համբուրել Նշխարները. և իրենց ընկերացու նոյն վա-
նամայրը՝ որ ցոյց տուաւ մեծ հմտութիւն և բարեպաշ-
տութիւն:

Սկիզբը բացուեցաւ դարանը ուր կը պահուէր Ս.
Փաթըրիցիայի արեւը. և Հայրերուն ընկերացող ճաշա-
նան՝ որ սրտին մէջ ջերմօրէն կը պահէր նախորդ օր-
ուան յիշատակը, մաղթեց որ այս անգամ ալ Ս. Փա-
թըրիցիա՝ իր արեան հրաշքը կրկնելով՝ յոյսը տար
Հայաստանի այդ բարի զաւակներուն՝ թէ այդ ազգը
պիտի վերածնէր քրիստոնէութեան մէջ:

ԵՐԿՐՈՐԴ ՀՐԱՇՔԸ

«Ամէն», պատասխանեց Քոյր Մարգարիտա
ներկայ միւս Քոյրերուն հետ: Եւ կրկնեց ուղեորը.
«Ամէն». — Եղիցի:

Վերսկսան աղօթքները կենդանի հաւատքով. Գանի
մը բոլոր վերջ արեւը կատարելապէս հաւած էր և կը
լեցնէր սրուակը: Ամէնքը կ'արտասուէին... կարծես չէին
հաւատար իրենց աչքերուն:

Երկու Հայրերը ուրախութեան արցունք ունէին աչ-
քերուն մէջ իրենց յղացած յոյսին համար՝ թէ իրենց
Հայաստանը նորէն պիտի ծաղկէր Յիսուսի Քրիստոսի
անունով և իր Գրիգոր Նահատակին: Անոնք չէին յա-
զենար համբուրելէ, դիպելէ և կրկին համբուրելէ: Վար-
դարաններ անին և սրուակներուն դպցուցին:

Հ. Վ. Տալեան ուզեց շարական մը երգել Ս. Փա-
թըրիցիայի, արեւելեան մեղեդի մը, հառաչներու զուար-
մը, հաւատքի քերթուած մը: Եւ երգը վեր սլացաւ մա-
քուր և սրտալայն:

Այցեկեցին միւս մասունքներուն ալ, և իրենց մշա-
քին առջեւն — որ խոնարհած կ'երկրպագէր երեքսրբեան
Աստուածութեան — տեսան Քրիստոսի օրհնեալ անուան
մէջ փառահեղ դարեր, Յետոյ Միեթարեան երկու Հայ-
րերուն երեւցան Ս. Գրիգոր Հայկազնի նշխարները:

Աչքերը չէին յազնար տեսնելէն, ձեռքերը չէին զո-
հանար անոնց հպելէն, և սրտերը կը խանդավառէին
իրենց հաւատքի ցոյցերու երգին մէջ, որոնց իբր պը-
սակ՝ նոյն Հ. Վ. Տալեան ուզեց երգել շարական մը
ի պատիւ Ս. Գրիգորի՝ որ Լուսաւորիչն է Հայաստանի:

Հոս կ'արձանագրենք հիւն ու նոր տարիէն պատմական քանի մը ուշախ և տխուր դէպքեր:

ՊԱԼԻՈՆԻ ՏՈՒՉՈՒԹԻՒՆ. — Մարտ 13ին (1933) Ն. Ս. Պիոս ԺԱ Քահանայապետ՝ ի յարգանս
Հայ կաթ. Եկեղ. Նուիրապետութեան և անոր արժանանալի Գլխուն՝ անձամբ կատարեց ՊԱԼԻՈՆԻ
տուեցութիւնը առ Գերեջ. Հոգեւոր Տէր Աւետիս Արքիարեան կաթողիկոս, որպէս պաշտօնական
հաստատութիւն կաթողիկոսական ընտրութեան: Այս առթիւ ուրախ ենք արձանագրելու՝ որ Մարտ
ամսոյն հանդիսապէս պիտի տօնուի Ամեն. Արքիարեան կաթ. Պատրիարքի Քահանայապետ ձեռ-
նադրոշման յիսնամեայ յոբելեանը (1884 - 1934):

ՀԱՅ. ԿԱԹ. ՆՈՐԱՆՏԻՐ ՀՈՎԻՒՆԵՐ. — Հոկտ. 29ին Ամեն. Արքիարեան կաթողիկոս, Պէյ-
րուսի մէջ մեծ չքով ձեռնադրեց Գերայ. Գրիգոր վրդ. Հիւնտիէն՝ արքեպիսկոպոս Հալէպի, և
Պարսկեան Ա. վրդ. Բ.՝ արքեպիսկոպոս Մարտինի, որուն նախկին առաջնորդը Գերայ. Յովն.
Արքեպ. Նեախմեան փոխադրուեցաւ Եգիպտոսի Հայ կաթողիկէ թեմին հովիւ:

ԶԱՐԵՀ ՊԵՅ ՆՈՒՊԱՐ ընտրուած է Նախագահ Հ. Բ. Միութեան՝ Դեկտ. 14ին, և իր հա-
րազաւոր Առաքել Պէյ՝ Փոխ-Նախագահ: Վստահ ենք որ «Հայր հայրենեաց» մեծ հայուն զաւակ-
ները պիտի շարունակեն իրենց հօր ազգօգուտ անմահ գործը նոյն հոգեւով և անձնութեամբ:

Համազգային մեծ սուգին առթիւ կը բերենք մեր խորին ցաւակցութիւնը Ազգին բոլոր մար-
միններուն՝ Ամերիկահայոց առաջնորդ Ամերիկ. ԱՐՔԵՊՍ. ԳՈՒՐԵԱՆԻ եղբարկան մահուան համար,
դաշնակցարուած հայ սրբապիղծ ձեռքերէ՝ Նիւ Եորքի Ս. Խաչ Եկեղեցին՝ Դեկտ. 24ին:

— Խորին ցաւով կ'արձանագրենք նաեւ՝ Ս. Ռ. վարժարանի Նախկին աշակերտ ԳՐԻԳՈՐ ՍԻ-
ՆԱՊԵԱՆԻ մահը՝ ի Փարիզ, Դեկտ. 22ին: Մեր անկեղծ ցաւակցութիւնը իր բոլոր սիրելիներուն:

— Ազգային մեծ կորուստ մ'եղաւ նաեւ մահը՝ Լիբանոնի նախկին կառավարիչ ԳՈՒՐԵՈՒՄՅԱՆ
ՅՈՎՀԱՆՆԵՍ ՓԱՇԱՅԻ, Հոռմի մէջ, Օգոստոս 11ին (1933):

ԽՄԲ.

Որդւոց մտերիմ ձայնն էր առ իրենց հայրը, պան-
դուխտին վառ կարօտն էր հայրենիքին համար, վշտա-
բեկ աղաղակն էր հոգեւորն՝ որ հաւատք կը խնդրէ, սրտի
թափն է որ բարախ կը փնտռէ:

Այցեկութեան աւարտին՝ երկու Հայրերը իսկապէս
յուզուած շնորհակալութիւն յայտնեցին Քոյրերուն եւ
մեկնեցան: Քահանային՝ որ իրենց կ'ընկերէր՝ ըսին
արտասուական աչքերով. «Արդարեւ այս վայրկեանս
մեզմէ ամէն ոք կրնայ կրկնել Սիմէոնի երգը. «Արդ
արձակեալ զձառայս քո Տէր... ի խաղաղութիւն, զի
տեսին աչք իմ զփրկութիւն քո»:

Ահա օրագրին պատմածը, որուն վրայ կ'աւելցնենք
հակիրճ ծանօթութիւններ Ս. Փաթըրիցիայի կենսագրու-
թեան:

Սրբուհին՝ պաշտպան Նափուլի քաղաքին՝ թոն է
մեծն Կոստանդնուսի, ծնած ի Կ. Պոլիս 340ին. կը
փախչի ի Հոռմ և Լիպարիոս Ս. Պապէն կը ստանայ
կուսութեան քոյրը, Հօր մահէն վերջ Կ. Պոլիս կը վե-
րադառնայ, և հրաժարած կայսերական թագէն՝ ունե-
ցածներն աղքատներուն կը բաշխէ և կը մեկնի ուխտի
անօրինական տեղերը:

Մովսիսի փոթորիկէ մը մղուած՝ Նափուլիի ափը
կ'ընայ և հոն քանի մ'ամիս վերջ կը վախճանի սըր-
բութեամբ և մարմինը կ'ամփոփուի Բարսեղեան Հարց
վանքին մէջ, ուր կը մնայ իր հոգեզաւակներուն քով՝
որոնք իր անուամբ Պատրիզիան (Patriziane) կը կոչ-
ուին: 1864ին այս կոյսերը՝ իրենց վանքին ջնջուելէն
վերջ՝ կը քաշուին Ս. Գրիգոր Լուսաւորչի վանքը, հե-
տեքին անոնք իրենց հիմնադիր մօր նշխարները:

Այս քոյրերուն կը յաջորդեն «Քոյր խաչեալք եր-
կըրպագուց Յիսուսի ի Ս. Հաղորդութեան» կոյսերը՝
որ նոյնքան մեծ նախնադրութեամբ և բարեպաշ-
տութեամբ կը պահեն այս հայաւուէր սրբուհոյն մա-
սունքը Հայաստանեայց Հօր և Լուսաւորչի պաշտելի
զգլուն մասունքին հետ:

Ինչպէս կը տեսնենք՝ սրբուհին նահատակ չէ. կրկին
սրուակներու մէջ յարգուած իր արիւնը մահէն շատ
վերջ է որ ելած է իր լինդերէն՝ երբ բարեպաշտներու
խնդրանքին վրայ իբր մասունք ահուայ մը հանել ու-
զած են անոնք:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԵՑԻՔ

“ԲԱԶՄԱՎԷՊ”

ՀԱՆԴԵՍԻՆ

ՈՐ ԿԸ ԹԵՒԱԿՈՒԷ ԻՐ ԳՈՅՈՒԹԵԱՆ

92^{րդ} ՏԱՐԻՆ

1843 1934

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵԳԻՆՆ Է

ԻՏԱԼ. ԼԻՐԵԹ 60 կամ 16 Զ. ՖՐ. ԿԱՆԻԿ

Դպրոցներու, տկուրներու, որրամոցներու և
ազգային բոլոր ըմբերակաւ հաստատութեանց
համար պէ՛տ ԳԻՆ:

Ասկէ զատ ո՛ր և է զեղջի համար հարկ է
կամխապէս յարմարիլ խմբագրութեան հետ:

Թղթակցութիւն, բաժնեկի, յօդուած գրել ուղղակի
խմբագրութեան հասցէին:

“ԲԱԶՄԱՎԷՊ”-Ի ՀԵՏ ՓՈԽԱՆԱԿՈՒԱԾ ԹԵՐԹԵՐ

1932 - 1933

ԱԶԱՍ ԽՕՍԲ. օրաթիւրթ, Բ. տարի, M. Louiza,
41, Sofia (Bulgarie).

ԱԶԴԱԿ. երկօրեայ, 2-է. տարի, B. P. 587, Bey-
rout (Liban).

ԱԶԴԱՐԱՐ. օրաթիւրթ, 2. տարի, Pérchembé
Pazar, No. 16, Istanbul.

ԱԼԻՍ. օրեան Սիւր. վերալ. Միութեան. ԺԱ. տարի,
P. O. Box 198, Madison Sq. Sta. New-York.

ԱԼԻԲ. շաբաթաթիւրթ, Գ. տարի, Avenue Lalé-
zar, Téhéran (Perse).

ԱՅԳԵՍՏԱՆ. Ա. տարի, 1922, Rue Voulis 20 a.
Athènes. (շաբաթ)

ԱՆԱՀԻՏ. երկամեայ, հանգէս մտածման և ար-
ուեստի, (նոր շրջան) Ե. տարի, 9 Rue Say, Paris
(France).

ԱՊԱԳԱՏ. երկօրեայ, ԺԳ. ԺԴ. տարի, 60 Rue
Provence, 60, Paris (France).

ԱՌՈՂՋ ԿԵԱՆԲ. ամսագիր բժշկական և ատոլ-
լագական, Բ. տարի, 81, Rue de Rochefou-
cauld, Paris (9e). (շաբաթ)

ԱՍՊԱՐԵԶ. շաբաթաթիւրթ, ԺԳ. ԺԴ. տարի, P.
O. Box 855, Fresno, Calif. (U. S. A.).

ԱՐԱԶ. հոօրեայ, Բ. տարի, Str. Pictor Luchian,
14, Bucarest.

ԱՐԱԲՍ. շաբաթաթիւրթ, Ը. տարի, 5. Rue Mah-
moud Pacha el Falaki, Alexandrie (Egypte).

ԱՐԵԳ. Բ. տարի, Rue des Dominicaines 17,
Marseille. (շաբաթ)

ԱՐԵԻ. օրաթիւրթ, ԺԸ. տարի, B. P. 1060, Le
Caire (Egypte).

ԱՐԵԻԵԼԲ. օրաթիւրթ, Դ. տարի, Rue Pasteur
73, Salonique (Grèce).

ԱՐԵԻԵԼԲ. օրաթիւրթ, Գ. տարի, Galata B. P.
1203, Istanbul (Turquie).

ԱՐՄԻԻ. Բ. տարի, 1933, Փլովտիւ. (շաբաթ):

ԱՐՁԱԳԱՆԳ ՃԵՄԱՐՏՈՒԹԵԱՆ. կրօն - բա-

րդական և ատոլլագական ամսաթիւրթ, Դ. տարի,
8, Rue de Prague, Paris (12e) (France).

ԱՐՁԱՆ. Ա. տարի, (1932) Rue Tchervimadji
30, Istanbul (շաբաթ)

ԱՐՄԵՆԻԱ. շաբաթաթիւրթ, Գ. տարի, P. O.
Box 917, Los Angeles, Calif. (շաբաթ)

ԱՐՄԵՆԻԱ. շաբաթաթիւրթ, Գ. տարի, Canning
1087, Buenos Aires (Argentine).

ԱՐՈՒԵՍՏԻ ՖՐՈՆՏՈՒՄ. զրական յաւելուած
«Խորհրդ. Հայաստան»-ի. (շաբաթ)

ԱՐՓԻ. Հայ ընտանիքի պարբ. կիսամեայ, Բ.
տարի, 78, Glenville Ave., Allston, Mass. (U. S. A.).

ԱԽԵՏԻՔ. պաշտօնաթիւրթ Հայ կաթ. Պորթ. Տ. Կ.
Բ. տարի, Patriarcat Arm. Cath. Beyrouth (Liban).

ԲԱՆԵՐ. մեծ շաբաթ. Ա. տարի (1933), Ankara
Caddesi, Resid ef. Khan, Istanbul. (շաբաթ)

ԲԱՆԵՐ. հոգեւոր ամսաթիւրթ, Ժ. տարի, 7 Rue
Papère, Marseille.

ԲԱՆԻՈՐ. շաբաթաթիւրթ, Բ. տարի, 132, East
26th Street New York, N. Y. (շաբաթ)

ԲՈՐՈՒ. շաբաթական զաւելուածաթիւրթ, ԺԴ. տարի,
(միայն «Վերածնունդ»-ին): Haig Karakache, Téhé-
ran (Perse).

ԳԵՐՄԱՆԻԿ. հոսանքայ, Մարաշի հայրենակց.
միութեան, 300, Fourth Avenue, Room 801 New
York (U. S. A.).

ԳՈՅԱՄԱՐՏ. հոօրեայ, Գ. տարի, 29, La Ca-
nebière, Marseille (France).

ԳՐԱԿԱՆ ԱՐՇԱՒ. (զր-դեղ. յաւելուած «ՊՐՈ-
ԼԵՏԱՐ»-ի) Tiflis. (շաբաթ)

ԳՐԱԿԱՆ ԴԻՐԲԵՐՈՒՄ. (որդան Հայ Պիւս-
դրոշմաւոր իրեան, (շաբաթ)

ԳՐԱԿԱՆ ԹԵՐԹ. Բ. տարի, Պիւսդրաւ. իրեան:
ԳՐՈՂ. Ժ. տարի, Dmitrievtkaia, 13 Rostov,
(U. R. S. S.).

(Շարունակելի)

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ

ՎԵՆԵՏԿՈՅ ՄԽԻԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆԷՆ

ԳՈՆՏԱՔՃԵԱՆ Հ. ԱՆԱՆԻԱ

ԳՐՊԱՆԻ **ԳԱՂՂԻԵՐԷՆԷ ՀԱՅԵՐԷՆ**
ԲԱՌԳԻՐՔ **ՀԱՅԵՐԷՆԷ ԳԱՂՂԻԵՐԷՆ**

 Երկրորդ տպագրութիւն – ճոխացած – Էջ 736: Գինը՝ 10 ֆրանք կամ 2 ֆր. 2.

ՕՐԱՑՈՅՑ ԵՒ ԳՈՒՇԱԿ ՕԴՈՑ 1934 (ճՀԸ ՏԱՐԻ)


Գին՝ ուղեծախսով 0,60 Զ. ֆր.

Հ. ՎԱՐԳԱՆ Վ. ՀԱՅՈՒՆԻ

ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՌՈԳԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅԵՐԷՆԷ

Էջ 371. Գինը՝ 3 ֆրանք Զուից. կամ 15 ֆր. ֆրանսական

“ԵՎԱՅՔ ՋԱԽԱՏԱՑԵԱԼՔ,,



... ՆՄՈՅՇ ՄԸ ...

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ

.... ՍՐԲԱԶԱՆ

ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ

ԵՒՐՈՊԱԿԱՆ ԶԱՅՆԱԳՐՈՒԹԵԱՄԲ

ՀԱՆԳԵՐԶ

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԵԱՄԲ

(ՀԱՅ – ՖՐԱՆՍ.)

Հ. ՂԵՒՈՆԴ Վ. ՏԱՅԵԱՆԷ

Գինը՝ 3 ֆր. Զուից.

“VENEZ, O FIDELES,,

(Yégaïk havadatsialk)



Spécimen de la Musique Sacrée

de l'Eglise Arménienne

mis en notation européenne

précédé d'une étude.

Par P. LÉONCE Dr. DAYAN

Prix 3 Fr. S.

ՀՐԱՇԱԼԻ նուագ մը և բացարձակ նորութիւն՝ Հայ երաժիշտներու և երաժշտագէտներու, որոնք Հայ Եկեղեցական երգերու ճաշակն ու սթափումի գեղեցիկ պահեր ունենալու համար՝ զիւրաւ պիտի կարենան ջութակով կամ դաշնակով նուագել:

ՂԱԶԱՐԱՅ ՓԱՐՊԵՅԻՈՅ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՅ

ԶՈՐՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Էջ 675

Գինը՝ 3 ֆր. Զուից.